



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 33Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 21Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Նախագահի 22.07.2017թ. թիվ ՆՀ-515-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Դատավորների կնիքների և դրոշմակնիքների գծապատկերները հաստատելու մասին» թիվ 21Լ որոշման 1-ին հավելվածում ուժը կորցրած ճանաչել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հարություն Մովսեսյանի անվամբ կնիքի գծապատկերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 03-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահի
պաշտոնակատար

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. հուլիսի 31
ք. Երևան